ԹՐԱԿԱ-ԿԻՄԵՐԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ՄԻԱՒԻՄՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ (մ. թ. ա. VI—V դդ.)

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հինթրակյան ցեղերի թափանցումը Հայկական լեռնաշխարհ՝ սկսվելով մ. թ. ա. XII դարում, խեթական պետության կործանումից անմիջապես հետո, շարունակվում էր նաև հետագայում։ Այդ ընթացքում թրակա-փռյուգական ազգակից լեզուներով խոսող մի շարք ցեղեր Փոքր Ասիայի վրայով շարժվելով արևելք, հաստատվում են լեռնաշխարհի տարբեր, առաջին հերթին արևմտյան և հարավ-արևմտյան, շրջաններում[1]։ Դրանցից էին՝ փռյուգացի-միսիացիները (մուշկերը), արիմ-ուրումեացիները (արմենները), ալիզոնները, օդոմանտները, մոկսիանները և այլն[2]։

Հինթրակյան ցեղերի մեկ ուրիշ խումբ, որը պատկանում էր թրակա-կիմերական ընդհանրությանը, Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններն էր թափանցել հյուսիսից՝ Կովկասի վրայով։ Դրանք կիմերներն էին, սարապարները, տրերները և նրանց ցեղակիցները[3]։ Այս վերջին առիթով պետք է նկատի առնել, որ հինթրակյան էթնիկական տարրը մ. թ. ա. II—I հազարամյակների սահմանագլխին բնակվելիս է եղել ոչ միայն Բալկանյան և Փոքրասիական թերակղզիներում (թրակա-փռյուգական ընդհանրությունը), այլև արդի Ուկրաինայի հարավում և նրանից հարավ-արևելք ու արևելք ընկած շրջաններում (թրակա-կիմերական ընդհանրությունը)։ Գիտությանն հայտնի են մերձազովյան շրջաններում և Հյուսիսային

---

[1] E. A. Vallis Budge, L. W. King, Annals of the Kings of Assyria, v. I. London, 1902, էջ 35—36։ Ի. Մ. Դ ь я к о н о в, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 117—119։

[2] Ս. Տ. Երեմյան, Հայկական առաջին պետական կազմավորումները, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 92։ Նույնի՝ Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 37—43։ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, Երևան, 1971, էջ 230—237։

[3] S t r a b o, XI, 5, 2 և XI, 14, 14։ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 6—13։ Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 90—92։ Կիմերների թրակական ծագման օգտին ավելի որոշակի խոսում է Մ. Ի. Արտամոնովը։ Նա գրում է. «Չնայած այն բանին, որ իրանական են ճանաչվում Փոքր Ասիայում հանդես եկած կիմերական թագավորների անունները, ավելի շատ տվյալներ կան կիմերների մոտիկության վերաբերյալ ոչ թե սկյութների և ոչ թե Կովկասի բնիկների, ինչպիսիք էին մեոտները, առավել ևս ոչ թե լեռնային Ղրիմի տավրերի, որոնց մեջ կատակոմբային մշակույթը տարածում չէր գտել, այլ Փոքր Ասիայի և Բալկանյան թերակղզու հին բնակչության, մասնավորապես թրակացիների հետ։ Այդ է վկայում և Ստրաբոնից (էրատոսթենեսից) սկիզբ առնող գրական ավանդույթը և թրակական ու բոսպորյան թագավորների անունների նույնությունը...» (М. И. А р т а м о н о в, Киммерийцы и скифы, Л., 1974, էջ 63, տե՛ս նաև նույն աշխատության 22, 85 և 125 էջերը)։

Կովկասում Թրակա-կիմերական ցեղերի երբեմնի գոյությունը հաստատող մի շարք տվյալներ[4]։

Թրակա-կիմերական ցեղերի առանձին հատվածների կողմից Կովկասյան լեռնանցքները հաղթահարելն ու Հայկական լեռնաշխարհ թափանցելը սկսվել էր ավելի վաղ ժամանակներում, քան կիմերների գլխավորությամբ դեպի Իրան, Միջագետք և Փոքր Ասիա (մ. թ. ա. VIII—VII դդ. ընթացքում) նրանց ձեռնարկած պատմական ներխուժումները։ Իսկ վերջիններս տեղի էին ունենում Անդրկովկասի և Հայկական լեռնաշխարհի վրայով[5]։

Հայկական լեռնաշխարհի հյուսիսում և հարակից շրջաններում Թրակա-կիմերական ցեղերի բնակության փաստը իր արձագանքն էր գտել թե՛ ժամանակի ասուրա-բաբելական արձանագրություններում, թե՛ հետագայի հույն հեղինակների երկերում։ Այդ ցեղերից կիմերները այստեղ հիշատակվում են արդեն մ. թ. ա. VIII դարում։ Ուրարտուում ասորեստանցի հետախույզ Աշշուրիսուայի զեկուցագրի մեջ, որը կազմվել է 722—715 թթ. միջև[6], նշվում էր, որ Գուրիանիա երկիրը գտնվում է Ուրարտու երկրի և Գամիռայի միջև։ Գուրիանիա-ն ստրաբոնյան գուրանիացիներ-ի[7] երկիրն է՝ ուրարտական Գուրիանի-ն[8], իսկ նրանից հյուսիս գտնված Գամիռա-ն՝ կիմերների երկիրը։

Հայկական լեռնաշխարհի հյուսիսում մ. թ. ա. VIII—VII դդ. ընթացքում կիմերները և նրանց աղգակից մյուս ցեղերը բավական մեծ տարածություն էին զբաղեցնում։ Նշելով, որ կիմերների բնակության տարածքը ներառում էր նաև այժմյան Լենինականի շրջակայքը (Հայկական ՍՍՀ Ախուրյանի և Ղուկասյանի շրջանները), Ս. Տ. Երեմյանը ենթադրում է, որ նրանց հիմնական մասը, ցեղակից տրերների նման, պետք է բնակվեր ավելի հյուսիս՝ Շիրակի և Կուր գետի միջև ընկած տարածություններում[9]։

Հետագա Գուգարքի հյուսիսային մասում տրերների երբեմնի բնակության իրողությունը իր արտացոլումն է գտել տրերների ցեղանունը պահած

---

[4] В. Д. Блаватский, Киммерийский вопрос и Пантикапей, «Вестник МГУ», 1948, № 8, էջ 9—12։ Л. А. Ельницкий, Киммерийцы и киммерийская культура, «Вестник древней истории», 1949, № 3, էջ 14—18։ Ю. С. Крушкол, К вопросу о киммерийцах, «Археология и история Боспора», Симферополь, 1952, էջ 89—91։ Е. И. Крупнов, Киммерийцы на Северном Кавказе (по археологическим данным), «Древние племена и народности Кавказа», Материалы и исследования по археологии СССР, № 68, М.—Л., 1958, էջ 176—195։ М. И. Артамонов, նշվ. աշխ., էջ 20—23, 63։

[5] М. И. Артамонов, Вопрос о происхождении скифов, ВДИ, 1950, № 2, էջ 47։ И. Л. Лавров, О пути вторжения киммерийцев в Переднюю Азию, «Советская археология», 1965, № 3, էջ 219—223։ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 6—10, 13։

[6] Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 295—296։ Նույնի՝ Ванское царство, М., 1959, էջ 231—232։ И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 235—236։

[7] Strabo, XI, 14, 14.

[8] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 10։ Հիշյալ Գամիռա երկիրը մի ժամանակ Բյուրիսացարար տեղադրվում էր հետագա Կապադովկիայում (հայ. Գամիրք)։ Սակայն, ինչպես Հ. Մանանդյանն էր գրում, «շատ պարզ է, ուրեմն, որ կիմերների երկիրը, որն Ուրարտուի հյուսիս-արևմուտքում գտնված Gurlani-Kurlani-ի թիկունքումն էր՝ ոչ թե Կապադովկիայում պետք է լիներ, այլ Ուրարտուի հյուսիսում, հավանորեն այժմյան Ախալքալաք-Ախալցխայի մոտակա շրջաններում» (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 10)։

[9] Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները... («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 92)։

Թրիարե երկրի (regio Thriare) մասին Պլինիոսի հաղորդած հետևյալ տեղեկության մեջ. «Թասիեի (հավանորեն, Տաշիր) և Տրիարեի (հավանորեն, Թրիալեթ) երկիրը տարածվում էր մինչև Պարիադրեսյան լեռները. սրանցից վերև Կողքիսի ամայի վայրերն են, որոնց կողքին՝ Կերավնյան լեռների դիմաց, ապրում են արմենոիալյուբները»[10]։

Տրերների ցեղանունն է առկա նաև Գուգարքի հյուսիսային գավառներից մեկի հայկական Թռեղ և վրացական Թրիալեթի անվանումների մեջ[11]։ «Այս անվան ավելի արխաիկ ձևը,— գրում է Ս. Տ. Երեմյանը,— պետք է լինի «Թրիար» (<«*Թորի+ար»), որը պահպանվել է Պլինիոսի մոտ՝ regio Thriare։ Վրացերենի տեսակետից այս վերջինիս օրինաչափ ձևն է «Թրիալեթ-ի»... Մեջբերված անուններում պահպանվել է տրերների՝ թրակական ցեղերից մեկի անունը»[12]։

Հետագա Շիրակում և հարակից շրջաններում կիմերներից բացի բնակություն էին հաստատել թրակա-կիմերական ուրիշ ցեղեր ևս։ Դրանցից մեկի վերաբերյալ Ստրաբոնը հաղորդում է հետևյալը. «Ասում են, որ նաև թրակացիներից ոմանք, որ անվանվում են սարապարաներ, այսինքն՝ գլուխ կտրողներ (κεφαλοτόμοι) ապրում էին Արմենիայից վերև և հարևան էին գուրանիացիներին (Γουρανοί) և մեդացիներին. դրանք գազանաբարո և անսանձ լեռնականներ էին, գլուխ կտրող և սկյութացիների նման դանգ մորթազերծող, և հենց այդ նշանակությունն ունի սարապարան»[13]։

Սարապարների Շիրակում հաստատվելու ժամանակաշրջանը Հ. Մանանդյանը ենթադրում է մ. թ. ա. VII—VI դդ. սահմանագլխին։ Նա գրում է. «Ուրարտական թագավորության թուլացման և քայքայման ժամանակ կիմերները և նրանց հետ եկած սկյութական և թրակիական դաշնակից այլ ցեղերը, ըստ երևույթին, տարածվել էին դեպի հարավ և գրավել էին Շիրակը և Վանանդը։ Ստրաբոնի մոտ հիշատակված սարապարաները, հավանորեն, այդ ցեղերից մեկն էին»[14]։

* * *

Ուրարտական պետության թուլացման ժամանակաշրջանում (մ. թ. ա. VII դարի կեսից սկսած) Արարատյան դաշտից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած երկրները ոչ միայն կարողացան թոթափել ուրարտական լուծը, այլև ի վիճակի եղան համախմբվելու և ստեղծելու բավականաչափ ուժեղ ցեղամիություններ։ Այդ պրոցեսները հիմնականում ընթանում էին երկու կենտրոնների շուրջ։ Մեկը Սևանա լճի ավազանն էր (և հատկապես հետագա Գեղաքունի գավառը), որտեղ դեռևս մ. թ. ա. VIII դարում գոյություն ուներ Ուեդուրի-էթիունի ցեղամիությունը[15], իսկ մյուսը՝ Շիրակ-Արշարունիքը[16]։ Ըստ

---

10 Plin., Nat. Hist., VI, 11 (տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 12)։

11 Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 315, ծան. 2։ Ս. Տ. Երեմյան, Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացույց»-ը (տե՛ս «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 82)։

12 Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները... («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 92)։

13 Strabo, XI, 14, 14 (տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 11)։

14 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 12։

15 Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-Блура, Ереван, 1966, էջ 88—89։ Նույնի՝ Биайнили (Урарту), Ереван, 1970, էջ 434—435։

16 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 20—23։

այսմ, զարմանալի չէ, որ վաղ միջնադարում Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում իշխած բուն հայկական ծագմամբ նախարարական տոհմերը (իսկ դրանք բացարձակ մեծամասնություն էին կազմում օտարածին մյուս նախարարական տոհմերի համեմատությամբ) սերած էին համարվում կա՛մ Գեղամից (և նրա սերունդներից), կա՛մ Շարայից (և նրա սերունդներից)[17]։ Սրանցից առաջինը՝ Գեղամը, Գեղաքունի երկրի և նրան իր անունը տված գեղ ցեղի էպոնիմն է[18], իսկ երկրորդը՝ Շարան, Շիրակ-Արշարունիքի և, ինչպես կտեսնենք ստորև, այստեղ իշխած սարապար ցեղի։

Երևենք հին Հայաստանում Շարայի և նրա զարմերի մասին գոյություն ունեցած և Մովսես Խորենացու շնորհիվ մեզ հասած ավանդազրույցների այն պատառիկները, որոնք կարևոր են տվյալ հարցի պարզաբանման համար։

1. «Եւ [Արամայիսը] զորդի իւր Շարայ, զյոլովածին եւ զշատակեր, առաքէ ամենայն աղխիւ իւրով ի դաշտ մի մօտաւոր, արգաւանդ եւ բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերինն, որ անուանեցաւ Արագած, յորոյ անուն եւ զգաւառն ասեն անուանեալ Շիրակ»[19]։

2. «Իսկ Գուշարայ, որ որդւոցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, եւ զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զՄոբ, զՁոր, մինչև ցամուրն Հնարակերտ»[20]։

3. «Բայց զտէրութիւնն Աշոցայ, եւ զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ [արքան] ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ»[21]։

Խորենացու հաղորդած այս տեղեկություններից ելնելով, Շարային և նրա զարմերին կարող ենք համարել այս նույն կողմերում մինչև հայ ժողովրդի կազմավորումը գոյություն ունեցած սարապար ցեղի և նրան ազգակից թրակա-կիմերական մյուս ցեղերի էպոնիմ-նախնիները՝ նրանց բանահյուսական անձնավորումները։ Հենց այս ցեղերի տոհմա-ցեղային ավագանու ներկայացուցիչներից էին սերած լինելու հին հայկական այն տոհմերը, որոնք իշխում էին Մեծ Հայքի Շիրակ, Արշարունիք, Աշոցք, Տաշիր, Ջավախք, Կանդարք, Կողբ (Կողբոփոր), Մոբ (Մոբոփոր) և Ձոր (Ձորոփոր) գավառներում[22]։

---

17 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ա, ժբ։ Բ, է, ը։

18 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 303։ Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. I. Ереван, 1956, էջ 187։

19 Խորենացի, Ա, ժբ։ Շարայի ավանդազրույցի գրառման ժամանակաշրջանում Շիրակը և Արշարունիքը առանձին վարչական միավորներ էին։ Սակայն ավելի վաղ ժամանակներում նրանք կազմում էին մեկ ամբողջություն (հիշենք, որ կամսարական նախարարները կոչվում էին «տեարք Շիրակայ և Աշարունեացս»)։ Այս իսկ պատճառով, Շարայի կերպարը Շիրակում ունեցած տեղայնացմամբ հանդերձ, իր անվամբ կապվում է ոչ թե նրա, այլ Արշարունիք (<Աշարունիք) տեղանվան հետ (տե՛ս Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975. էջ 118—121)։ Շարան Արշարունիքի հետ է կապվում, թերևս, նաև Երաստի՝ Արամայիսի թոռան (այսինքն՝ Շարայի որդո՞ւ) միջոցով։ Ըստ Խորենացու բերած ժողովրդական ստուգաբանության (նույն տեղում), Երաստի անունն էր կրում երասխ գետը։ Իսկ իր երասխամերձ դիրքի պատճառով Արշարունիքը կոչվում էր նաև Երասխաձոր։

20 Խորենացի, Բ, ը։

21 Նույն տեղում։

22 Հ. Մանանդյանը Շարային համարում էր ավելի ուշ Շիրակի տարածք թափանցած սարմատական էլինիկական տարրի էպոնիմը (նշվ. աշխ., էջ 31—33)։ Դրա համար նա հիմք

Շարա–սարապար զույգի փոխադարձ կապի մասին է խոսում ոչ միայն աշխարհագրական միջավայրի նույնության (Շիրակ-Արշարունիքում ունեցած իրենց տեղադրությամբ), այլև լեզվա-ծագումնաբանական ակնհայտ աղերսի գործոնը։ Սարապար (հուն. Σαρπαραξ) ցեղանվան «գլուխ կտրող» (հուն. κεφαλοτομοι) ստուգաբանությունը, որը ելնում է այս ցեղանվան առաջին մասի իրանական սար («գլուխ») բառի հետ մերձեցումից, պետք է համարել ժողովրդական ակունքներ ունեցող ոչ-գիտական ստուգաբանություն[23]։ Հավանաբար, սարապար-ը արտացոլումն է տեղական *շարապար-ի (հունարենը շ չունի և նրա դիմաց պետք է դներ իր ս-ն)։ Վերականգնված *շարապար-ը կարելի է բաժանել շարա և պար բաղադրիչների՝ դրանցից առաջինը նույնացնելով այն կրած ցեղի (սարապարների) էպոնիմ-նախնու Շարա (Շարայ) անվան հետ։ Շար(ա) բաղադրիչն առկա է նաև Աշարունի (<*ա-շար-ունի) նախարարական տոհմանվան և նրանից սերած Աշարունիք (>Արշարունիք) տեղանվան մեջ[24]։ Սար(ա)<*շար(ա) փոխակերպության օգտին է խոսում ներքոհիշյալ հանգամանքը ևս։

Ինչպես տեսանք, Ստրաբոնը սարապարներին համարում էր Հարևան ոչ միայն գուրանիացիներին, այլև մարերին (մեդացիներին)։ Վերջին դեպքում, անտարակույս, նկատի է առնված սարապարների այն հատվածը, որը բնակվելով այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ տարածքում մերձարաքսյան շրջաններում սահմանակցել է մարերի հետ։ Այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ հյուսիս-արևմտյան մասը բռնած Շարուր գավառի անվան մեջ առկա է նույն շար(ա) բաղադրիչը։ Դարձյալ սարապարական տարրի հետ կապվող այս տեղանվան ստուգաբանության առնչությամբ, Գր. Ղափանցյանը գրում է. «Կասկած չկա, որ šar(a) էթնիկական անվանումից է կազմված նաև հայկական Շարուր, Šarur գավառի անունը... Ašaruni(kh) գավառի Šarur դաշտից ունեցած որոշ հեռավորությունը չի կարող արգելք հանդիսանալ ծագումնաբանական այսպիսի մեկնաբանության համար, քանի որ միևնույն ցեղի ճյուղերը հեշտությամբ կարող էին տարաբնակվել և հեռանալ»[25]։

Այսպիսով, Շարա–Աշարունի-Շարուր անվանումների ծագումնաբանական փոխադարձ կապի մեջ գտնվող շարքը, Շիրակ-Արշարունիք-Շարուր տարածքում իր տեղայնացմամբ, առնչվելով աշխարհագրական նույն միջավայ-

---

էր ընդունում Շարա և սարմատ (ըստ նրա՝ *շարմատ) անունների հնչյունական նմանությունը։ Նակայն այժմ կարելի է ապացուցված համարել, որ սարմատ (հուն. Σαρμαται) ցեղանվան նախատիպը երբևէ *շարմատ տեսքը չի ունեցել։ Ըստ Վ. Ի. Աբաևի, ցեղանվան ավելի հին (մ. թ. ա. V դարից հայտնի) սավրոմատ ձևը (հուն. Σαυρομαται) ենթադրում է սկյութա-սարմատական լեզուների *sāvārmat(a) նախատիպը (նրա բաղադրիչները՝ sau «սև», arm «ձեռք», t՝ «-ներ» ձևերով, առկա են այսօրվա օսերենում ևս. տե՛ս В. И. Абаев, Осетинский язык и фольклор, т. I, М.—Л., 1949, էջ 37)։ Նշանակում է. Շարա անունը ոչ մի ընդհանուր բան չունի սարմատ կամ սավրոմատ (<sāvārmat-) ցեղանվան հետ։

23 Ինչ վերաբերում է պարտված թշնամու գլուխը կտրել-վերցնելու սովորությունին, որի համար էլ, իբրև թե, սարապարները կրում էին այդ ցեղանունը, ապա պետք է նկատել (այն մատնանշվել էր դեռևս Հ. Մանանդյանի կողմից, նշվ. աշխ., էջ 11, ծան. 2), որ Հայկական լեռնաշխարհի ցեղերից «գլուխ կտրողներ» էին նաև խալյուբները (Xen., Anabasis, IV. 7, 16)։ Այս սովորությունը գոյատևում էր վաղ միջնադարյան Հայաստանում ևս։

24 Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, էջ 121։

25 Նույն տեղում, էջ 122։

ըն ունեցած սարապարների հետ, վկայում է, որ նրանց ցեղանվան տեղական-հայկական արտասանությունը, իրոք, եղել է *շարա-պար:

Ինչ վերաբերում է քննարկվող ցեղանվան երկրորդ պար բաղադրիչին, ապա, մեր ենթադրությամբ, այն հինթրակյան ցեղանվանակերտ մասնիկ է՝ ծագած հնդեվրոպական նախալեզվի *per- «ծնել, սերել» արմատից[26]։ Ըստ այսմ, սարապար< շարա-պար նշանակելու է «Շարայածին», այսինքն՝ «Շարայի ցեղ» (հմմտ. Հայկ և Հայկազն, Արամ և Արամազնեայք): Հավանաբար, այս նույն իմաստով էր պար-ը նախապես գործածվում նաև բուն Թրակիայում (արդի Բուլղարիան)։ Անտիկ ժամանակներում այնտեղ հայտնի էին պար բաղադրիչը պարունակող բազմաթիվ տեղանուններ[27] (իմաստային անցման տեսակետից հմմտ. իրանական զանտու>զանդ տերմինը, որը նախապես նշանակում էր «ցեղ» կամ «տոհմ», ապա՝ «տոհմա-ցեղային բնակավայր» >«բնակավայր»)։

* * *

Վերևում տեսանք, որ թրակա-կիմերական ցեղերը բնակություն էին հաստատել ոչ միայն Շիրակ-Արշարունիքում, այլև նրանից հյուսիս՝ մինչև Կուր գետը ձգվող տարածություններում։ Դրանցից մեկն էին տրերները՝ բնակված Կուրի աջափնյակը բռնող և իրենց անունը կրող Թրիարև երկրում (Թռեղքը ավելի լայն սահմաններում)[28]։ Վերջինիցս հարավ բնակություն էր հաստատել, ամենայն հավանականությամբ, նույնպես թրակա-կիմերական մեկ ուրիշ ցեղ, որի էպոնիմ Գուշարը, համաձայն Խորենացու բերած ժողովրդական ավանդության, Շարայի որդին էր։ Վաղուց է ցույց տրված, որ Գուշարը թե՛ իր անվամբ և թե՛ իր տեղայնացմամբ կապվում է Գուգարքի և նրան իր անունը տված գուգար ցեղի հետ[29]։ Երկու հանգամանք՝ մեկը Շարայի հետ Գուշարի հանդես բերած սերտ ազգակցությունը, մյուսը Գուշարի զարմերի ժառանգած տիրույթների միջակա դիրքը սարապարական Շիրակի և տրերական Թրիա-

---

[26] Հմմտ. լատիներեն նույնարմատ pario «ծնել», «լույս աշխարհ բերել» և parens «ծնող» բառերը։ Բայց կա նաև դակերեն per (<հ.-ե. *puer-) «տղա, որդի» բառը՝ ազգակից լատիներեն puer «երեխա, տղա, որդի» բառին (օրինակ, հայտնի է Decebalus per Scorilo «Դեկեբալ որդի Սկորիլի». տե՛ս В. И. Георгиев. Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, էջ 128)։

[27] Դրանցից են, օրինակ, Բուգիպարա, Բեսապարա, Սկուսկուպարա, Բենդիպարա և այլն (տե՛ս Атлас по Българска история, изд.-во БАН, София, 1963, էջ 3—4)։ Մեր *շարապար ցեղանվանը իր կազմությամբ ավելի մոտ է հիշյալ տեղանուններից վերջինը, որի հիմքում ընկած է թրակյան Βενδις դիցանունը (Βενδις=հուն. Արտեմիս. տե՛ս „Древнегреческо-русский словарь", т. I, М., 1958, էջ 293)։

[28] Թրիարև երկիրը, հավանարար, տարածվում էր ոչ միայն Թրիալեթիի լեռնաշղթայից հարավ ընկած շրջաններում (ինչպես հետագա Թռեղքը), այլև նրանից հյուսիս։ Այստեղ բնակված տրերական էթնիկական տարրի հետ պետք է մասնավորապես կապել Կուրի աջակողմյան վտակներից մեկի (ակունքները գտնվում են Թրիալեթիի լեռնաշղթայի հյուսիսային լանջերում) Տանա անունը։ Ըստ երևույթին, այն երկվորյակն է Դոն գետի թրակա-կիմերական Տանա-իս (հուն. Τάναις) անվան։ Իսկ վերջինս համարվում է նույն գետի սկյութա-սարմատական Դոն <*Dän անվան զուգահեռը (հմմտ. օսերեն don<*dän «ջուր», «գետ»)։ Այս գետի ստորին հոսանքի շրջանում բնակված թրակա-կիմերական ցեղերի լեզվի համար, հայերենի և թոխարերենի նման, ենթադրվում է հ.-ե. d>t անցումը (տե՛ս М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. I, М., 1964, էջ 528—529)։

[29] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 425։ Гр. Капанцян, Историко-лингвистические работы, т. II, էջ 122—123։ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 40։

րեի միջև, հուշում են, որ Գուշարի անձնավորած էթնիկական տարրը, այսինքն՝ գուգար ցեղը, պետք է պատկաներ թրակա-կիմերական ցեղերի սարապարա-տրերական խմբավորմանը[30]։ Նշանակում է, գուգարները Հայկական լեռնաշխարհի հյուսիսում պետք է հայտնվեին սարապարների և տրերների հետ միասին, հավանաբար, թրակա-կիմերական ցեղերի մ. թ. ա. VIII դարի մեծ ներխուժման ընթացքում։

Եթե Պլինիոսի վերոբերյալ հաղորդման մեջ Տասիև (Տաշիր) և Թրիարե (Թռեղք) երկրանունների համատեղ գործածության փաստը համարենք Հայկական լեռնաշխարհի հյուսիսում թրակա-կիմերական ցեղերի ստեղծած երկմիասնական (դուալ) կառուցվածքով մի ցեղամիության երբեմնի գոյության մասին վկայություն, ապա կարող ենք ենթադրել, որ այդ ցեղամիության մեջ որպես հավասարազոր, բայց առանձին, վարչա-քաղաքական միավորներ հանդես են եկել Տասիեն (գուգարների գլխավորությամբ) և Թրիարեն (տրերների գլխավորությամբ)։ Այս տեսանկյունից նայելիս նոր իմաստ են ստանում Գուգարքի և հարակից շրջանների հին հայկական իշխող տոհմերի ծագման և տիրույթների վերաբերյալ Մովսես Խորենացու հաղորդած հետևյալ տեղեկությունները. «Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանդարք, եւ զկէս մասինն Ջաւախայ, զԿողբ, զԾոբ, զՁոր, մինչև ցամուրն Հնարակերտ։ Բայց զտէրութիւնն Աշոցայ, եւ զսեպհականութիւնն Տաշրայ կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ։ Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զհզօր ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ բդեաշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի. զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացւոց ազգացն, զոր էած Նաբուգոդոնոսոր, որպէս Աբիդենոս պատմէ...»[31]։

Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին Գուգարքում և հարակից շրջաններում հիշատակում է հին հայկական իշխող տոհմերի երկու խմբավորումներ՝ Գուշարի զարմերինը և ոմն Միհրդատից սերած համարվող Գուգարաց (Վրաց) բդեշխներինը։ Առաջինների տիրույթները գտնվում էին հարավում՝ բռնելով հետագա Ջավախք (Ջաւախք վերին), Աշոցք, Տաշիր (նաև Տաշիր վերին), Ծոբ (Ծոբոփոր), Ձոր (Ձորոփոր), Կողբ (Կողբոփոր) և Կան-

---

[30] Ն. Ադոնցի ենթադրությամբ, գուգարները եկել էին հյուսիսից և ներկայացնում էին ստրաբոնյան գարգարացիների (այժմյան ինգուշների նախնիների) Հայկական լեռնաշխարհ ներխուժած առաջին ալիքը (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 424, ծան. 3)։ Այս ենթադրության առաջին մասը, որն ընդունվեց հետագա ուսումնասիրողների կողմից, ընդունելի է այսօր ևս։ Սակայն երկրորդ մասը չընդունվեց և անընդունելի է, թեկուզև այն պատճառով, որ Ստրաբոնը, տեղյակ լինելով և՛ Գուգարք (Γωγαρηνή) երկրի, և՛ գարգարացի (Γαργαρεῖς) ցեղի գոյությանը, ոչ մի ակնարկ չի անում դրանց աղերսի վերաբերյալ։ Ն. Ադոնցն ինքը, գուգարների և գարգարացիների ծագումնաբանական կապի մասին իր ենթադրությունը թողեց սոսկ ենթադրություն, հետագայում ևս ոչ մի փաստարկ չբերելով նրա հիմնավորման համար։ Իսկ Հ. Մանանդյանը, փաստորեն, մերժեց այն՝ իր հերթին գուգարներին վերագրելով սկյութա-սարմատական ծագում (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 38—40)։ Վերջին դեպքում Հ. Մանանդյանը հիմնվում էր գուգարների էպոնիմ Գուշարի և Շարայի սերտ ազգակցության փաստի վրա։ Սակայն, ինչպես վերևում ցույց տրվեց, Շարան էպոնիմն էր Շիրակի տարածքում հաստատված ոչ թե սկյութա-սարմատական, այլ սարապարական էթնիկական տարրի։

[31] Խորենացի. Ի, բ։

գարք գավառները, իսկ երկրորդներինը՝ հյուսիսում, բռնելով հետագա Թուեղք, Մանգլեաց փոր, Պարուար, Խանցիխե, Քուիշափոր, Բողնոփոր գավառները[32] և, ըստ երևույթին, Վիրքի (Քարթլի) հովտային մասը («ընդդէմ լերինն Կաւկասայ»)։

Պլինիոսի և Խորենացու հաղորդած տեղեկությունների համադրումից կարելի է բխեցնել, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում՝ Փամբակի լեռնաշղթայի և Կուր գետի միջև, իրոք, ժամանակին գոյություն են ունեցել մեկ ցեղամիության մեջ ընդգրկված երկու առանձին վարչա-քաղաքական միավորներ։ Դրանցից առաջինը՝ Պլինիոսի Տասիեն (ըստ Խորենացու՝ Գուշարի և նրա զարմերի տիրույթները) բռնել է հիշյալ տարածքի հարավը, իսկ երկրորդը՝ Պլինիոսի Թրիարեն (ըստ Խորենացու՝ Միհրդատի իշխանության տակ դրված և իվերիացի-վերիացիներով բնակեցված շրջանները) բռնել է այդ նույն տարածքի հյուսիսը։ Պետք է ենթադրել, որ հարավում՝ Տասիեում (Տաշիրը՝ լայն սահմաններում) իշխել են գուգարները, որոնց էպոնիմն է հենց Գուշարը, իսկ հյուսիսում՝ Թրիարեում (Թուեղքը՝ լայն սահմաններում) իշխել են տրերները, որոնց անունն էր կրում երկիրն ինքը։ Ստորև բերվող Տաշիր և *Իվիր[33] տեղանունների ստուգաբանությունները, կարծես, հաստատում են «Տասիե և Թրիարե» ցեղամիության երկմիասնական կառուցվածքի և նրա բաղադրատարրերը հանդիսացած վարչա-քաղաքական զույգ միավորների վերաբերյալ ասվածների ճշմարտացիությունը։

Հայտնի է, որ հին արևապաշտ ժողովուրդները, ի թիվս որոնց և հնդեվրոպացիները, աշխարհի կողմերը որոշելիս դեմքով դառնում էին դեպի արևվելք (արևածագի վայրը)։ Այստեղից էլ՝ նրանց բոլորի, և մասնավորապես հնդեվրոպացիների, լեզվամտածողության մեջ տեղի ունեցած մի կողմից «աջ» և «հարավ», մյուս կողմից «ձախ» և «հյուսիս» հասկացությունների մերձեցումը, իսկ երբեմն էլ դրանց ուղղակի նույնացումը։ Ըստ այսմ, մենք հակված ենք Տաշիր և *Իվիր երկրանունների գոյությունը համարելու նման նույնացման մի արտահայտություն՝ դրանց մեջ առանձնացնելով հնդեվրոպական նախալեզվի *deks- «աջ» և *seu- «ձախ» արմատներն ու -er մասնիկը։

Տաշիր երկրանվան տաշ- բաղադրիչը պետք է առաջացած լինի հ.-ե. *deks- «աջ» արմատի հետագա *desk- զարգացումից (-ks->-sk- շրջմամբ)[34]։ Այս նույն արմատը պարունակող հին հնդկերեն daksina-s բառը կիրառվել է ոչ միայն «աջ», այլև «հարավային» իմաստով, երբ ազգա-

---

[32] Գավառների ցուցակը բերել ենք ըստ «Աշխարհացույցի»՝ ելնելով Խորենացու հաղորդած տեղեկություններից (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, քարտեզը)։

[33] *Իվիր տեղանունն է ընկած հին հայերի կողմից քարթվելական էթնիկական տարրին տրված վիր-ի (որտեղից էլ Վիրք «Քարթլի») և *վիր-ացի>վրացի անվանումների հիմքում։ Նույն այս տեղանունից եկող իվերիացի կամ վերիացի ձևերը կրում են հունական միջնորդության կնիքը (հմմտ. հուն. Ἰβηρία «քարթվել» և Ἰβηρία «Քարթլի»=*Իվիր և *Իվիր. ավելի մանրամասն տե՛ս ստորև)։

[34] Հ.-ե. d>հայ. տ անցման համար հմմտ. *dōm> տուն, *diū>տիկ, *diw->տիւ և այլն (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մասն Ա, Երևան, 1940, էջ 74, 76)։ Իսկ հ.-ե. -sk->հայ. շ անցման համար հմմտ. *skel- > շեղ, *sker-d->շերտ, *skēd->շիր և այլն (տե՛ս Գ. Բ. Ջաուկյան, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, էջ 260—261)։

կից մյուս լեզուների նույնարմատ համապատասխան բառերը պահել են իրենց նախնական «աջ» իմաստը[35]։ Իսկ *Իվիր երկրանվան իվ- բաղադրիչը սերում է հ.-ե. *seu- «ձախ» արմատից։ Ըստ երևույթին, այս նույն արմատն է ընկած ինչպես հայերեն հիւսիս, այնպես էլ ռուսերեն север և լիտվերեն šiáure նույնիմաստ բառերի հիմքում[36]։ Ինչ վերաբերում է քննարկվող երկրանունների երկրորդ -իր, բաղադրիչներին, ապա դրանք պետք է բխեցնել հ.-ե. -er մասնիկից, որը կիրառվել է երկու իրար հակադիր հասկացություններ արտահայտող մակբայների կազմության ժամանակ ևս[37]։

Որպես օրինակ աշխարհի հակադիր կողմերը նշող բառերի գտած տեղանվանական կիրառության կարելի է բերել, թեկուզև, հին արաբական Եմեն (Արաբական թերակղզու հարավում) և Շամ (Ասորիք՝ Արաբական թերակղզուց հյուսիս) երկրանունները։ Սրանցից առաջինը՝ Եմեն-ը, բառացիորեն նշանակում է «աջ» >«հարավ», իսկ երկրորդը՝ Շամ-ը, նշանակում է «ձախ»>«հյուսիս»։ Այս երկրանունների գոյությունը պայմանավորված է բուն Արաբիայի գրված աշխարհագրական դիրքով՝ հարավից Եմենի, իսկ հյուսիսից Շամ-Ասորիքի միջև[38]։

Այսպիսով, Տաշիր և *Իվիր երկրանունների հնդեվրոպական-հայկական ստուգաբանությունները ևս ենթադրել են տալիս, որ «Տասիե և Թրիարե» ցեղամիությունն ունեցել է երկմիասնական կառուցվածք։ Ըստ երևույթին, ցեղամիությունը կազմած վարչա-քաղաքական միավորներից հարավայինը իր գրված դիրքի պատճառով կոչվել է Տասիե (Տաշիր, այսինքն՝ «հարավ»), իսկ այն գլխավորած ցեղի անունով՝ Գուզարէ։ Ցեղամիությունը կազմած վարչա-քաղաքական միավորներից հյուսիսայինը իր գրված աշխարհագրական դիրքի պատճառով կոչվել է *Իվիր (այսինքն՝ «հյուսիս»), իսկ այն գլխավորած ցեղի անունով՝ Թրիարե (Թռեղք)։ Միևնույն ժամանակ պարզ է դառնում, որ *Իվիր երկրանունը, որպես հիշյալ տարածքի հյուսիսը գրված Թրիարե երկրի երկրորդ անուն, անխզելի իմաստային կապի մեջ է այդ նույն

---

35 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971, էջ 246 և М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. I, էջ 506։

36 Ի տարբերություն *Իվիր տեղանվան, հայերեն հիւսիս բառի մեջ հ.-ե. *seu- արմատի նախաձայն s-ն ոչ թե ընկել է, այլ վերածվել հ-ի։ Հ.-ե. s-ի այսպիսի փոխակերպումները (երբ մի դեպքում այն ընկնում է, մյուսում՝ վերածվում հ-ի) օրինաչափ են հայերենի հնչյունաբանության տեսանկյունից (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մասն Ա, էջ 32, 36, 38, 58, 60)։ Ռուսերեն север բառի տակ բերած իր ծանոթագրության մեջ Մ. Ֆասմերի Երկի ռուսերեն թարգմանիչ Օ. Տրուբաչովը, север<հ.-ե. *k'ĕur տեսակետից բացի, բերում է մեկ ուրիշ տեսակետ, համաձայն որի բալթիկ-սլավոնական լեզուների համապատասխան բառերը սերած են համարվում հ.-ե. *seu- «ձախ» արմատից (տե՛ս М. Фасмер, նույն տեղում, т. III, М., 1971, էջ 588—589)։

37 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 3, Երևան, 1957, էջ 110։ Տաշիր և *Իվիր երկրանունների տաշ- (<*desk-<*deks-) և իվ=հիւ (<*seu-) արմատները հակադիր հասկացություններ են արտահայտում ինչպես «աջ» և «ձախ», այնպես էլ «հարավ» և «հյուսիս» նշանակությամբ։

38 Հին արաբները ևս կողմնորոշվում էին դեմքով դեպի արևելք դարձած։ Այստեղից էլ՝ բերված երկրանուններում առկա «աջ»>«հարավ» և «ձախ»>«հյուսիս» իմաստային անցումները (տե՛ս Е. А. Беляев, Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье, М., 1966, էջ 36)։

տարածքի հարավը գրաված նախնական Գուգարքի (Գուշարի և նրա զարմերի տիրույթները) երկրորդ անվան՝ Տաշիր-ի հետ։

Վերջինիս կապակցությամբ ուշագրավ է այն փաստը, որ հին հայերը *տաշիր (այսինքն՝ «աջ»>«հարավ») և *իվիր (այսինքն՝ «ձախ»>«հյուսիս») բառերը կիրառել են ինչպես համանուն երկրները, այնպես էլ դրանց մեջ գտնվող որոշ աշխարհագրական օբյեկտներ և դրանց բնակիչներին նշելու համար։ Կուրի աջակողմյան-հարավային վտակներից մեկը՝ հետագա Կամենկան, այժմյան Ձորագետը, հին հայերը կոչում էին Տաշրաջուր (իսկ նրա վերին հոսանքի շրջանը գրավող Լոռվա սարահարթը՝ Տաշրատափ)[39]։ Նույն կերպ *Իվիր էր կոչվելու Կուրի ձախակողմյան-հյուսիսային վտակներից մեկը՝ հավանաբար այժմյան Քվաբլիանի գետը (սկիզբ է առնում Մեսխական լեռնաշղթայի հարավային լանջերից և Կուրի մեջ թափվում Ախալցիխեից ներքև)։ Պլինիոսը հիշատակում է այն Իբեր անվամբ՝ մոսխերի երկրի մինչև նրա ափերը տարածված լինելու կապակցությամբ[40]։ Հին Տաշիրի (Տասիս) բնակիչները պետք է կոչվեին *տաշիրք, որից էլ կազմվել է Տաշիր երկրանվան Տաշիրք (սեռ. Տաշրաց) տարբերակը։ Ճիշտ նույն կերպ հին *Իվիրի (Թրիարե) բնակիչները պետք է կոչվեին *իվիրք, որից էլ մի կողմից հայերեն վիրք (նաև *վիր-ացի>վրացի), մյուս կողմից հունարեն Ἴβηρ (-ηρος), Ἴβηρες (>լատին. Ibēres, Ibēri) ցեղանունները[41]։ Այս վերջին ձևերն իրենց հերթին տվել են հայերեն Վիրք (սեռ. Վրաց) և հունարեն Ἰβηρία (լատին. Ibēria) երկրանունները։

Վիր (<*իվիր) ցեղանվան հնդեվրոպական-հայկական ծագումը հնարավոր է նրանով էս, որ քարթվելական ցեղերն իրենք իրենց երբեք այդպես չեն կոչել։ Ճիշտ նույն կերպ հայերին տրված քարթվելական սոմեխի անվամբ հայերն իրենք իրենց երբեք չեն կոչել, որովհետև այն ունի զուտ քարթվելական ծագում[42]։ Վիր (<*իվիր) անվան «քարթվելացումը» (օտարների կողմից դրա զուտ քարթվելական էթնիկական տարրին վերագրումը) տեղի է ունեցել *Իվիր (Թրիարե) երկրի ոչ-քարթվելական բնակչության, այդ թվում նաև տրերների տեղական հատվածի, քարթվելացմանը զուգընթաց։ Այս վերջին

[39] Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. էջ 85։

[40] Plin., NH, VI, 11.

[41] Հազիվ թե Ἴβηρ – Ibēres ցեղանունը առնչություն ունենա Սպեր գավառի անվան հետ։ Հայտնի է, որ Սպեր կոչվում էր հետագա Մեծ Հայքի այն գավառը, որտեղ Ճորոխ գետը գծում էր իր նշանավոր աղեղը՝ շրջադարձից հետո հոսելով իր նախնական ընթացքին ճիշտ հակառակ ուղղությամբ։ Ըստ այսմ, Սպեր տեղանվան (երկրանվան) հիմքում պետք է ընկած լինի հ.-ե. *(s)per- («ոլորել, պտտել», «պարուրել, գրկել») արմատը։ Մեր տեղանվանը մոտ են կանգնած հատկապես հունարեն σπεῖρα («աղեղ, գալար, ոլորան») և լատիներեն spira («պարույր, գալար») նույնածագում բառերը։ Ինչ վերաբերում է Սպերի հին բնակիչներին տրված Ἑσπερῖται և նման անվանումներին, ապա դրանք Սպեր տեղանունից կազմված *sper-ite անվան հունական (իմաստավորված կամ աղավաղված) ձևերն են։

[42] Հայերին տրվող սոմեխի անունը քարթվելական ցեղերի միջոցով անցել էր Հյուսիսային Կովկաս։ Այսօր էլ օսերն այդպես են կոչում հայերին (somḫi, somḫae «հայ», somḫaegta «հայերը»)։ Եթե հայերին օսերը կոչում էին հայերի և իրենց միջև բնակված քարթվելական ցեղերի կողմից նրանց տրված սոմեխի–սոմխի անվամբ, ապա զարմանալի ոչինչ չկա, որ քարթվելներին նշելու համար փոքրասիացի հույները կարող էին գործածել իրենց և քարթվելական ցեղերի միջև բնակված հայերի կողմից վերջիններիս տրված *իվիր – [illegible] անունը։

պրոցեսի հետևանքն է, մասնավորապես, նախկինում տրերաբնակ գավառներից մեկի Թռեղք անունը. Թռեղք<*Թռիաղ-ք (=Թռիալ-ք)։ Եթե այս գավառը բնակեցրած տրերները քարթվելացած չլինեին, ապա լատինական Thriare և քարթվելական Թրիալեթի (<Թրիալ-եթի<*Թրիար-եթի) ձևերի դիմաց սպասելի էին հայկական *Թրերք (<*Թրիար-ք) կամ *Թռերք (<*Թռիար-ք) ձևերը։

Ըստ երևույթին, մ. թ. ա. V դարի վերջից սկսած «Տասիե և Թրիարե» ցեղամիությունը ապրել էր վերելքի և ընդարձակման մի ժամանակաշրջան։ Այս իրադարձություններն են, հավանաբար, արտացոլված Պլինիոսի հետևյալ տողերում. «Թասիեի (հավանորեն, Տաշիր) և Տրիարեի (հավանորեն, Թրիալեթ) երկիրը տարածվում էր մինչև Պարիադրեսյան լեռները. սրանց վերևում էին Կողքիսի ամայի տեղերը, որոնց կողքին, Կերավնյան լեռների դիմաց, ապրում են արմենոխալյուբները։ Մոսխերի երկիրները ձգվում են մինչև Իբեր գետը, որը թափվում է Կուր գետի մեջ, իսկ սրանց տակն են սակասանները (sacassani) և ապա մակրոնները մինչև Ապսարուս գետը»[43]։

Ինչպես տեսնում ենք, Պլինիոսը «Տասիե և Թրիարե» ցեղամիության հյուսիս-արևմտյան սահմանը հասցնում էր մինչև Կողքիս, արևմտյանը՝ Պարխար (Պարիադրես) լեռներ, իսկ հարավ-արևմտյանը՝ Սպեր (արմենոխալյուբների երկիրը)։ Նշանակում է, ինչ-որ ժամանակ «Տասիա և Թրիարե» ցեղամիությունը ներառում էր նաև այն շրջանները, որոնք տարածվում էին արևելքից՝ ցեղամիության բուն տարածքի, արևմուտքից՝ Պարխար լեռների, հյուսիսից՝ Կողքիսի և հարավ-արևմուտքից՝ Սպերի միջև։ Իսկ դրանք կազմում էին Ստրաբոնի հիշատակած Մոսքիկե (Μοσχική) երկիրն[44] ու հետագա Տայք նահանգի հյուսիսային գավառները (Ճակքը և Արսեաց փորը)[45]։

«Տասիե և Թրիարե» ցեղամիության մեջ ընդգրկված հողերի այսպիսի տեղադրության շնորհիվ իր լուծումն է ստանում Պլինիոսի հաղորդման առաջին և երկրորդ մասերի միջև առկա (թվացող) հակասությունը[46]։ Բանն այն է, որ իր հաղորդման առաջին մասում Պլինիոսը անում է «Տասիե և Թրիարե» ցեղամիության նոր ընդարձակ սահմանների նկարագրությունը, իսկ երկրորդ մասում խոսում է այն ցեղերի (մոսխեր, սակասաններ, մակրոններ) և նրանց ցեղային երկրների մասին, որոնք նոր էին ընդգրկվել ցեղամիության մեջ[47]։

* * *

Հայերենակիր էթնիկական տարրը իր հինթրակյան մյուս ցեղակիցների հետ միասին Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջաններն էր թափանցել դեռևս սարապարների գլխավորած «Շարայի» ցեղամիության և զուգարների ու տրերների գլխավորած «Տասիե և Թրիարե» ցեղամիության կազմավորումից դարեր առաջ։ Մ. թ. ա. VI—V դդ., երբ այս-

---

[43] Plin., NH, VI, 11 (տե՛ս Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 12)։

[44] Strabo, XI, 1, 18 (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 50, 79, 119)։

[45] Տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., քարտեզը։

[46] Դրա պատճառը, հավանաբար, այն է, որ Պլինիոսը խիստ համառոտել է իր աղբյուրի ավելի մանրամասն հաղորդումը։

[47] Մոսխերից հարավ և հարավ-արևմուտք բնակված սակասանների և մակրոնների միջև

տեղ գոյություն ունեին խնդրո առարկա ցեղամիությունները, հայերենակիր էթնիկական տարրը իր թրակա-փռյուգական և թրակա-կիմերական ազդակիցների հետ միասին կազմում էր այդ ցեղամիություններից առաջինի և երկրորդի հարավային մասի բնակչության մեծամասնությունը (փոքրամասնություններ ներկայացնելու էին հիմնականում հինկովկասյան և իրանա-սկյութական էթնիկական տարրերը)։ «Շարայի» ու «Տասիև և Թրիարև» ցեղամիությունների գոյության ընթացքում, մյուս ոչ հայախոս էթնիկական տարրերի նման, նրանցում իշխող թրակա-կիմերական ցեղերի հիմնական մասը (ի թիվս որում և սարապարներն ու գուզարները) նույնպես դարձել էին հայախոս՝ դրանով իսկ ամենակարևոր քայլն անելով կազմավորվող հայ էթնոսի մեջ ընդգրկվելու ճանապարհին[48]։ Այս պրոցեսի ավարտի արտացոլումը պետք է համարել այն, որ հին հայկական ավանդագրություններում Շարան՝ սարապարների ու նրանց գլխավորած ցեղամիության էպոնիմը, և Գուշարը՝ գուզարների ու նախնական Գուզարքի էպոնիմը, արմենների էպոնիմների (Արամանյակ, Արամայիս, Արամ)[49] հետ միասին դասված են Հայկի՝ կազմավորված հայ ժողովրդի ընդհանուր էպոնիմ-նախնու, սերունդների շարքը[50]։

Այս տեսանկյունից ուշադրության է արժանի ֆրանսիացի գիտնական Լ. Կավենյակի առաջ քաշած տեսակետը։ Հայկական լեռնաշխարհում հայերենի տարածման փաստը նա կապում է թրակա-կիմերական ցեղերի, և հատկապես տրերների, այստեղ հայտնվելու հետ[51]։ Անտարակույս, ֆրանսիացի գիտնականը գերագնահատում է այս գործում տրերների ունեցած դերը, սակայն, պետք է կարծել, որ ինչպես նրանք, այնպես էլ թրակա-կիմերական ուրիշ ցեղեր խոսել են նախահայերենին մոտ ազդակից լեզուներով և արմենական ցեղերի հետ միասին իրենց ներդրումը կատարել նախահայերենը լեռնաշխարհի բնակչության համար նախ միջցեղային հաղորդակցման միջոց, ապա և համընդհանուր խոսակցական լեզու (իր առանձին բարբառներով) դարձնելու գործում։ Այս առիթով հիշենք, որ հայերենում ի հայտ է գալիս թրակերենին մոտ մի բաղադրատարր։ Գ. Բ. Ջահուկյանի հոդվածներից մեկում կարելի է հանդիպել այսպիսի տողերի. «Այսպիսով, լիովին հնարավոր է, որ հայերենում պահպանված հնդեվրոպական շատ արմատներ, որոնք անմիջապես չեն գալիս հնդեվրոպական լեզվից և հայերենի բուն հնդեվրո-

---

սահմանի դեր էր կատարում Ապսարուս (Ճորոխ) գետը։ Քանի որ մակրոնները զբաղեցնում էին Պարխարի լեռնալանջերը, ուստի սակասանները, որպես նրանց, մոսխերի և արմենախոյրների (Սպերում) հարևաններ, բնակվելու էին հետագա Տայքի Ճակը և Արսեաց փոր գավառներում (ուրեմն, հնարավոր է, որ sacassan- <*նակ-ա-նան, հմմտ., օրինակ, արմեն-ա-խայր էթնիկական անվանումը՝ նույնպես երկդեղանվանական կազմությամբ)։

[48] «Տասիև և Թրիարև» ցեղամիության հյուսիսային մասում, նույն այդ ժամանակաշրջանում ընթացած բարբվելացման պրոցեսի հետևանքով, տեղի թրակա-կիմերական ցեղերի հիմնական մասը իշխող տրերների հետ միասին դարձել էր բարբվելախոս և հետագայում ընդգրկվել կազմավորվող վրաց (բարբվելական) ժողովրդի կազմի մեջ։ Այս առումով պատահական չէ, որ, ի տարբերություն գուզարների էպոնիմ Գուշարի, տրերների էպոնիմին չենք հանդիպում Հայկի սերունդների տոհմաբանության մեջ։

[49] Գր. Капацян, Историко-лингвистические работы, т. I, էջ 179։

[50] Խորենացի, Ա, գր և Բ, գր։

[51] E. Cavaignac, L'origine des Arméniens, „Revue hittite et asianique", XXI, 72, 1963, էջ 47–51։

պական միջուկին չեն պատկանում, ունեն հայասական և թրակյան ծագում»[52]։

Հետագայում, ըստ երևույթին մ. թ. ա. VI դարի ընթացքում, երբ Շիրակ-Արշարունիքը և տարավային Ռուգարբը ընդգրկվեցին Երվանդունիների Այրարատյան թագավորության կազմի մեջ[53], նրանց բնակչությունն հիմնականում արդեն հայկական էր։ Հաջորդ հարյուրամյակում խնդրո առարկա շրջանների բնակչությունն իր վերջին բայլերն արեց միասնական հայ ժողովրդի կազմի մեջ ընդգրկվելու ճանապարհին։ Այս առումով հատկանշական է, որ Երվանդունիների Այրարատյան թագավորության անկմանը հաջորդած ժամանակաշրջանի՝ մ. թ. ա. II դարի Հայաստանի բնակչությունը Ստրաբոնը բնութագրում էր «բոլորը միալեզու են» բառերով[54]։

ФРАКО-КИММЕРИЙСКИЕ ПЛЕМЕННЫЕ СОЮЗЫ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ (VI—V вв. до н. э.)

С. Г. ПЕТРОСЯН

(Резюме)

В XII в. до н. э. после падения Хеттской державы часть так называемой фрако-фригийской группы древнефракийских племен вторглась через Малую Азию в Армянское нагорье. Эту группу составляли мисийцы (фригийцы), аримы (армены), одоманты, мокснаны и другие. Племена другой, так называемой фрако-киммерийской, группы древнефракийских племен—киммерийцы, сарапары, треры и другие,—продвигаясь через Кавказ, появились на севере Армянского нагорья.

В ассирийских источниках начиная с 722—715 гг. до н. э. упоминается «страна Гамира», которую локализуют на севере Армянского нагорья, включая будущую Гогарену. Здесь наряду с киммерийцами (арм. *գամիր-ք*, гамир-к) жили также родственные им треры и гогары.

На севере будущей Гогарены, к югу от Куры находилась «страна Трнаере» (арм. *Թռեղ-ք*, Трел-к, груз. Трнал-ети), которую Плиний упоминает вместе со страной Тасне (арм. *Տաշիր-ք*, Ташир-к), занимавшей южные районы той же Гогарены, как одно целое. На основании этого упоминания и того, что названия *Вир-к*<**Ивир-к* (Трнаре—район обитания треров) и *Ташир-к* (Гогарена—район обитания гогаров) образуют двуединство: **Ивир-*<и.-е *seu-«левый»+-er, *Ташир-*<и.-е *deks-«правый»+-er, можно заключить, что на территории будущей Гогарены некогда существовал племенной союз треров и гогаров.

---

52 Գ. Բ. Ջանուկյան, Հայասայի լեզվի հինանատոլիական ծագման վարկածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 108։

53 Պատմական այս իրադարձություններն է, հավանաբար, արտացոլում հին հայկական ավանդաղրույցները «Արմավիրյան շարքը»՝ Շարայի ծնունդը դնելով Արմավիրում (Խորենացի, Ա, ժբ)։ Դրանով իսկ, Շարային և Գուշարին այն առնչում է Արմավիրին՝ Երվանդունիների այրարատյան էջուղի հնագույն կենտրոնին։

54 Strabo, XI, 14, 5.

Юго-западнее и южнее Гогарены, в Ширакe и Ашарунике, как вытекает из сообщений Страбона, обосновались сарапары. В названиях же *Шара* (эпоним Ширака и легендарный предок его жителей) и *Ашарунк* Гр. Капанцян выделил этнонимическую основу **шар(а)*. К этой последней, по нашему мнению, восходит и этноним сарапаров (*сарапар*—греческая передача местного названия **шарапар*).

Интересно, что в древнеармянских эпических сказаниях Шара, эпоним сарапаров, и Гушар, эпоним гогаров, считаются потомками Гайка. Так как Гайк—эпоним-предок всех армян, это значит, что сарапары и родственные им гогары впоследствии (не позднее III в. до н. э.) влились в состав древнеармянского народа. Это косвенно подтверждает Страбон, который характеризует население Армении II в. до н. э. словами:«...все стали единоязычными (ὁμόγλωττος)".